ւորս ի հոգևոր և ի մարմնաւոր կուսէ ի դիմաց համբէն Աղգիս Հայոց Տաճկաստանի գլխոգլոն Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան և զԱնծապատիւ Յակոբ Նորատունկեան, առաքեցին զնոսա ի սուրբ Էջմիածին ի համազգային Ժողովն ընտրութեան Կաթուղիկոսի հանդերձ թղթովն ընտրութեան և պատրիարգական թղթով, նշանակելով ի նմին զամենայն վիճակս Առաջնորդութեանց Հայոց Տաճկաստանի. յորում ի դիմաց հասարակութեան ժողովրդոց վիճակացն՝ լեալ էին պատգամաւորք՝ նոյն իսկ Ընդամքն Երեսփոխանական ժողովոյն Պոլսոյ ի նմին ընտրութեան իւրեանց. իսկ ի դիմաց բոլոր հոգևորականաց նոցին իրրև նախագահ եկեղեցականաց՝ պատրիարգն Կոստանդնուպոլսոյ գերապատիւ Տ. Պօղոս Արքեպիսկոպոսն. որք ըստ վերոյ ասացելոցս ընտրելով Կաթուղիկոս զՏէր Գէորգ Արքեպիսկոպոսն, խնդրէին յընդհանրական Ժողովէն ըստ ձայնից բազմութեան աղգի Հայոց և ըստ առաւելութեան վիճակաց՝ զնա ինքն կացուցանել Կաթուղիկոս զընտրեալն իւրեանց, և ոչ զայլ ոք։

Ըստ որոյ և ի համազգայնում Ժողովին եղելոյ ի 17 Սեպտեմբերի 1866ի, ի սուրբ Էջմիածին, ներկայութեամբ աղգային պատգամաւորաց և հոգևորական անդամոց այնր Ժողովոյ՝ բացարձակ և ստուար մեծամասնութեամբ ձայնից ընտրեցաւ ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց Տէր Գէորգ Արքեպիսկոպոսն երբեմնեան պատրիարգն Կոստանդնուպոլսոյ՝ յառաջնորդութենէն Պուրսայու. և թուղթն ընտրութեան առաջարկեցաւ ի հաստատութիւն կայսեր ընդ ձեռն փոխարքային Վրաստանի. և հրաւիրակք Աթոռոյս առաքեցան առ Նորընտիր Կաթուղիկոսն ամենայն Հայոց ի Կոստանդնուպոլիս։

Ապա իբրև և կայսերական հրովարտակ հաստատութեան նորընտիր կաթուղիկոսի, ի գարնան հետևեալ 1867 ամի ժամանեալ նորա ի սուրբ Աթոռս Էջմիածին բազմաթիւ ուղեկցաք, ի 21 Մայիսի յուրախութիւն հանուրց Հայկազանց մեծաշուք հանդիսիւ օծաւ ընդ ձեռն երկոտասան Եպիսկոպոսաց ի Կաթուղիկէ Մայր Եկեղեցւոջ սուրբ Էջմիածնի Արարատեան նախամեծար Հայրապետական Աթոռոյ՝ յընդհանրական Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց ի փոխանորդութիւն և ի յաջորդութիւն Առաքելոցն սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի՝ և սրբոյն Գրիգորի Ա. Լուսաւորչի, որ արդ ի լուսաւորութիւն աղգիս Հայոց և ի պայծառութիւն մանկանց Եկեղեցւոյ՝ վարէ զիշխանութիւն Կաթուղիկոսութեան։

ԱԲԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Շարունակութիւն)

Հայաստանեայց Եկեղեցւոյ անցեալը հետազօտելով և քննելով երբէք հնար չէ նորա մէն մի դարը առանց մոնրամասն յիշելոյ և խորին տեսութեան ենթարկելոյ՝ զայն լիովին իմանալ. մանաւանդ երբ նորա պատմութեան հետ կցուին Հայոց ազգային կենաց և Դպրութեան պատմութիւնքը,— որք Հայ. եկեղեցւոյ մէջ մի-

մեանց հետ աղխաղխեալ սերտ կապակցութիւն ունին և ի միմեանց անբաժանելի են, և առանց մեծ խորութեան և տարբերութեան՝ պահպանեալ և յարատևեալ են, — ուշադիր ընթերցողն կը դժուարանայ նկատել՝ զի այսպէս հակիրճ և համառօտիւ բովանդակել կարելի չէ. սակայն, ինչպէս յօդուածոյս շարունակութիւնն դիտել կտայ, իմ բուն նպատակ պարզապէս Եկեղեցւոյ և Հայութեան կեանք՝ այժ՝ ապահովութիւն և պայծառ փառաւորութիւն ներդործող անցեալը և պարագայքը հետազօտել և ներկայացնել լինելով՝ Հինգերորդ դարու վերջին քառորդէն սկսեալ ցվերջ Եօթներորդ դարու՝ ինչ ինչ նշանաւոր և երևելի անցքերը լռութեամբ անցած եմ, ինչպէս են Եզրի անկը և անհեռատես անխոհեմութիւնը և Պայրավանեցւոյն Յովհաննու պաշտպանութիւնը, Պրաց ի Հայոց բաժանումը, մեր Տումարի վերանորոգութիւնը, Շարականաց նկատմամբ կարգադրութիւնքը՝ (որ Ա՛ՆՔՆՔԷ անուամբ նշանաւոր տեղ ունին), երգեցողութեանց կարգադրութիւնքը և ներդաշնակեցուցիչ կանոնաւորութիւնը, կրօնական հերձուած և հալածումները, թողումք Յունաց, Պարսից, Հագարացւոց, հիւսիսաբնակ խառնուրդ ազգաց և այլոց նոյնօրինակ յարձակումները և ասպատակութիւնքը, Հայաստանի քարուքանդ աշխարհաւերութեանց մատնուիլը, Եկեղեցւոյ կրած տառապանքը, Հայրապետաց վիճակը և ժողովրդեան փրկութեան համար նոցա և Եկեղեցւոյ պաշտօնէից թափառական շրջիլ, յԵգիպտոս գերուիլ և ցխառան դիմել դեղերուիններբ։

Հայկական Պարութիւնն ևս զոգցիս ժամանակակից ձախորդութեանց ենթարկեալ էր, և Օ. և Ը դարուց մէջ նշանաւոր դիրք կամ վիճակ չունէր և կերպիւիւք յետադէմ յեղափոխութեան մէջ անկեալ էր։

Ի սոցանէ թէպէտ շատ կարևոր էր գոնէ Պ. բաց բաժանման վերայ ըստ արժանւոյն գրել և անհրաժեշտ հետևանքներէն դաս և օրինակ առնլոյ համար երկար տեսութիւններ խորհրդածել և ի մէջ բերել, բայց առանց սոցա ևս՝ ուշիմ և հեռատես ընթերցողն հասկանալով և քաջ իմանալով ինչ որ ինձ արժան էր ասել, միանգամայն զներկայն դիտելով՝ կներէ ինձ համառօտաբան լինելոյ այս խնդրոյս համար, և Ութերորդ դարը ի ձեռս առնելով՝ կենսական խնդիրները ի նիւթ կարդել։

Ինչ որ ցՈւթերորդ դար՝ երկար ժամանակէ հետէ հալածումներ կյաճախէին Հայոց Եկեղեցւոյ և Ազգի դէմ, գրեթէ նոյնը և աւելի վնասակար և դառն՝ կատաղի միջոցներով կշարունակուին և կը սաստկանան այս դարուս մէջ. սակայն այսպիսի հալածումները՝ — որ Տրդատ Ա Կաթուղիկոսի օրով (329 էն սկսեալ) առաւել ծանր և աղետալի կերպարանք առած էին և Հագարացւոց*) բռնութեանց

Հայկական Պարութիւնն ևս զոգցիս ժամանակակից ձախորդութեանց ենթարկեալ էր, և Օ. և Ը դարուց մէջ նշանաւոր դիրք կամ վիճակ չունէր և կերպիւիւք յետադէմ յեղափոխութեան մէջ անկեալ էր։

Ի սոցանէ թէպէտ շատ կարևոր էր գոնէ Պ. բաց բաժանման վերայ ըստ արժանւոյն գրել և անհրաժեշտ հետևանքներէն դաս և օրինակ առնլոյ համար երկար տեսութիւններ խորհրդածել և ի մէջ բերել, բայց առանց սոցա ևս՝ ուշիմ և հեռատես ընթերցողն հասկանալով և քաջ իմանալով ինչ որ ինձ արժան էր ասել, միանգամայն զներկայն դիտելով՝ կներէ ինձ համառօտաբան լինելոյ այս խնդրոյս համար, և Ութերորդ դարը ի ձեռս առնելով՝ կենսական խնդիրները ի նիւթ կարդել։

Ինչ որ ցՈւթերորդ դար՝ երկար ժամանակէ հետէ հալածումներ կյաճախէին Հայոց Եկեղեցւոյ և Ազգի դէմ, գրեթէ նոյնը և աւելի վնասակար և դառն՝ կատաղի միջոցներով կշարունակուին և կը սաստկանան այս դարուս մէջ. սակայն այսպիսի հալածումները՝ — որ Տրդատ Ա Կաթուղիկոսի օրով (329 էն սկսեալ) առաւել ծանր և աղետալի կերպարանք առած էին և Հագարացւոց*) բռնութեանց

(*) Պէտք է նկատել, զի որքան աշխարհակալութեան և տիրապետութեան հետևող ազգեր կը շատանային, այնքան ցաւալի վիճակի կենթարկուէր Հայաստան և Եկեղեցին և նախանձորդ հակառակորդաց աշխարհավարութեանց նպատակներ մեծ չարիք կմերէին Հայոց գլխոյն վասն զի նոցա իրաքանչիւրն կը ձգտայր ինքն միայն

Ներքև ոսաիկանաց իշխանութեանց օրեր լինելով՝ կխիզախէին և կրոնանային Եկեղեցեաց խաչերը վերցնելոյ, դիշերային պաշտամունքը խափանելոյ, Ա. Գրոց ուսումը ջնջելոյ համար, և այլ բազում օտար սովորութիւններ կպատուիրէին և կատարելոյ կրոնադատէին, — բայի հետևանքներ կծնանէին, Հայրապետութիւնը, Եկեղեցւոյ պաշտօնեայքը և ժողովուրդը աւելի կոգևորվէին և ի սէր և ի միութիւն կամրապնդէին, թեթև խանդարումները չյիշելով՝ Վրիստ. կրօնը, Աստուածպաշտութիւնը և Հայութեան վառվռուն եռանդը և արիւնը կատաքանար և աւելի կտարածուէր, և փոխադարձ ջերմեռանդութիւնքը կբորբոքուէին, ժողովրդեան հոգւոյ և մտաց աչքերը բացուելով՝ աւելի հետաքրքիր կլինէին և կհաստատուէին իւրեանց հայրենի աւանդութեանց և զգացմանց մէջ, վերջապէս՝ ինչ որ թշնամիք ջնջել կջանային, ընդհակառակն՝ աւելի կամրապնդէին և խորամատ և ապահով պահպանութեան միջոցներ հնարել տալոյ կառաջնորդէին։

Ութերորդ դարու առաջին քառորդին մէջ՝ մեր Եկեղեցւոյ դէմ կրկին մեծ վտանգ կսպառնային և արդարև կարող էին նմին ամենամեծ հարուած տալ՝ եթէ Յովհան Իմաստասէր Կաթուղիկոս չփութար ներքին պառակտմանց մեծ վիհեր բացող՝ և բաց ի Քաղկեդոնականութենէ՝ հեռզհեռէ ստուարանալոյ հետևող մի քանի կրօնական հերձուածներու առաջքը առնելոյ, որով մեծ սխրագործութիւն կատարեց և յիշատակեց։ Զ՝ատն զի ինչ որ հարուած կտան կրօնական յեղափոխութիւնք և հերձուածքն, երբէք իշխանավարական բռնութիւնք և հալածմունքներ չեն կարող նոցա համապատասխանել, կամ նոցա կիսոյն չափ արդիւնաւորուիլ։ Զ՝ատն որոյ Յովհան Իմաստասիրի Ընթերցեաց և Եղիպտաց աղանդաց դէմ ի գործ դրած արթուն և խոհեմ միջոցներն մեծ բարերարութիւն ընձեռեցին Հայ. Եկեղեցւոյ փրկութեան համար, և ներքին չարեաց առաջքը առնելով՝ միայն արտաքին հալածումները կմնային, որք աւելի կորստաբեր չէին և չեն կարող լինել՝ ցորչափ որ և իցէ Ազգի և Եկեղեցւոյ մէջ ներքին միութիւն՝ սէր և խաղաղութիւն կթագաւորէ։ Բայց և այնպէս Յովհան Իմաստասիրի օրով արտաքին հալածումները ևս դադարած էին, և ինքն Ամիրապետին ևս սիրելի հանդիսացած լինելով՝ Եկեղեցին ըստ բաւականին խաղաղութիւն կվայելէր. միայն Յունաց

իշխել, և կպահանջէր ինքեան միայն հնազանդիլ և հպատակիլ, և եթէ դրացի հզօր ազգերէն նախանձորդ և դարանակալ մեքենայութիւնք չըլլային, խաղաղութեամբ ապրելով՝ կբաւականանային հաւատարիմ հպատակութիւն և որոշեալ մի տուրք պահանջելով, միանգամայն թոյլ կտային և կը յարգէին մեր ազգային իրաւունքները Հայրապետաց իշխանութիւնքը և Եկեղեցւոյ անկախութիւնքը, մինչև անգամ երբեմն քաղաքական արտօնութիւններ և իշխանութիւններ ևս կը տային Հայոց։ Իսկ կրք Հայք ուրիշ աշխարհակալութեան հետևող ազգաց ուժոյն չդիմանալով՝ երբեմն միոյն և մերթ միւսոյն կհնազանդէին . . . , յայնժամ իւրաքանչիւր թշնամին՝ իւր ոխը հանելոյ համար ամեն չարիք կգործէր, զանազան բռնութիւններ կնիւթէր, իրր զի իւր վրէժը կլուծանէր և կպատժէր։

Իսկ Յունաց մեքենայութիւնք և չարութիւնք զբեթէ յարատև և անհամեմատ էին։

բաժնին մէջ մոլեռանդութեան և Յունական անխիղճ ձիրանաց ներքև կըտաղնապէր և դարանակալութեանց դէմ կը մաքառէր։ Սոցա հետ ի միասին՝ Յովհ. Իմաստասէր Կաթուղիկոս յաջողեցաւ Ազգային Ժողով ևս հրաւիրելոյ և ինչ ինչ ազգօգուտ և եկեղեցական բարեկարգութիւններ սահմանելոյ, որք ըստ մեծի մասին ժողովրդեան համար կարևոր էին և իւրեանց բարի արդիւնները ի ժամանակին ունեցան։

Հայկական դպրութիւնն՝ թէ և ոչ աւելի ընդարձակ և համայնածաւալ՝ բայց դարձեալ իւր շարունակութիւնը ունէր, իսկ Հայաստանի վիճակ այնքան անձուկ շրջան առած էր՝ որ ուսումնասիրութիւնը և դպրութեանց հետևին կարծես եկեղեցական պաշտօնէից և եթ մենաշնորհ եղած էր, և բաւական վանքերը կեդրոններ կկազմէին։ — Յայտնի բան է՝ զի ուսումնական յառաջադիմութեան համար միշտ անհրաժեշտ է գիտութեանց փայլած տեղւոյ հետ յարաբերութիւն ունենալ և երթևեկելով՝ ի նոցանէ օգուտ քաղել։ Հինգերորդ դարն ապացոյց է։ Սակայն երկար ժամանակէ հետէ՝ քաղաքական դէպքերու հետ կրօնական ատելութիւնք արգելք եղած էին այսպիսի երթևեկութեանց դէմ, որով ինչ որ արդէն մոռած և տարածուած էր՝ այն միայն անձուկ շրջանի մէջ կուսումնասիրուէր՝ թէպէտ հետզհետէ նուազանալով. իսկ եթէ պատահէր մի քանի անձանց երթևեկել օտար երկիրները և արտաքին գիտութիւնները ուսանիլ, այն ևս աննպաստ և անբաւական կմնային, ինչպէս Շ. իրակացի Անանիայի ուսումն՝ աշխատութիւն և ջանք եղած էր։

Բազդատունեաց հարստութիւն գոնէ այս նպատակիս նկատմամբ մի արդիւնաւոր ընթացք բռնած չէր, և նա հաղիւ ինքզինքն պաշտպանելոյ հետևելով՝ մի և նոյն ժամանակ փառասիրական մոլութեամբք՝ ներքին երկպառակութեանց տեղիք տուաւ, և թշուառ ժողովուրդն շուարած էր և ի զուր արիւններ կթափէր եղբայրասպան տեսարաններու ենթարկուած, թէ և մի և նոյն ժամանակ Եկեղեցւոյ Դուիրապետութիւնն և պաշտօնեայք միայն էին՝ որ ժողովուրդը կմխիթարէին և նոցա յօգուտ անձնանուէր կը ջանային։

Հայրապետաց պաշտօններ կծանրանային և մեծամեծ տաղնապներու կենթարկուէին։ Եկեղեցւոյ պաշտպանութիւնը, բարեկարգութիւնը և ապահովութիւնը արդիւնաւորելոյ ջանալոյն և մտածելոյն հետ՝ օտարաց դարանակալութեանց դէմ՝ ներքին խռովութիւնքը ջնջել կճգնէին, միմեանց դէմ դրգռուած իշխանները ի հաշտութիւն կամոքէին, և երբեմն Հագարացւոց, Պարսից և Յունաց անդթութիւնքը մեղմելոյ համար անխոնջ կաշխատէին, կհայցէին, կպաղատէին, և վերջապէս ի գութ շարժելով՝ զժողովուրդ կպատսպարէին, թէ և այսպիսի վիճակներէն դարձեալ Ազգ և Եկեղեցին ոչ սակաւ հարուած և վնասներ կկրէին։

Գառնեցի Գէորգ Կաթուղիկոսի անցքեր բաւական ապացոյցներ կմատակարարեն, և նա արդարև ի շարս Հայոց Կաթուղիկոսաց նշանաւոր տեղ բռնած է,

որ և յօտարաց ի շղթայս կապանաւորուած և շատ նեղութիւններ քաշած է ի սէր իւր Եկեղեցւոյ և ժողովրդեան. ուստի նա և երախտագէտ ժողովուրդն՝ իշխանք և նախարարք բաղում ոսկի և արծաթ մըսխելով կազատեն զնա օտարին ձեռքէն։

Նոյնպէս Յովհաննէս Կաթուղիկոս Պապմաչեան, որ աւելի դառն տառապանք կրեց, ինչպէս կարձառօտ պիտի տեսնուի յաջորդ թերթի մէջ։

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ՎԵՐԱՑ ՏԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԻ

ՆԱԽԿԻՆ ՀԱՅՈՑ։

(Շարունակութիւն և վերջ)

Ի։—Երկրի բարձր լեռներն, ամենաբարձր տեղերն նոյնպէս ևս դառել էին առարկայ Հայաստանի նախնի բնակիչների երկրպագութեան։ Արարատ, (Taurus) Տորոս, Կովկաս, Մանի, Կերկուր (Գրգուռ), Վարագ ևն. բաղում հռչակաւոր լեռներ ընդունում էին չաստուածութեան պատիւ։ Ուխտաւորութեան սովորութիւնն՝ որ անում էին այդ տեղերում՝ թերևս աւելի հին է քան թէ այդ ազգի գոյութիւնն։ Դա կարծում եմ որ աշխարհի ոչ մի ժողովրդի մէջ՝ այս սովորութիւնն այսօր ևս այնքան ընդհանուր և այնքան յամառ չէ քան Հայերի մօտ. բաց ի այն փոփոխութենէ՝ որ կարող են պատահել կարծեաց և երկրպագութեան առարկաների մէջ մարդկանց կողմանէ, դեռ շատ սովորութիւնք, շատ տեսակ ժողովրդական կրօնաւորական գործածութիւնք, պահվում են նոր անուանց և նոր ձևերի տակ։ Գրիգոր Հայաստանի բոլոր լեռների վերայ՝ ձեղ ցոյց կտան այցելութեան տեղեր, որոց մի քանին յայտնի սուրբերի անուանք են, այլք ներկայացնում են անծանօթ անուանք այս երկրի եկեղեցական պատմութեան մէջ. վերջապէս բաղում այլք վերաբերում են միայն աննուիրական պատմութեան կամ թէ ժողովրդական աւանդութեան։ Յառաջ քան թէ տաճար շինելու միտքն ծագած լինէր, մարդիկ իւրեանց կրօնը հրապարակաբար պաշտելու համար ուրիշ ժամադրեալ տեղեր չունէին եթէ ոչ սարերն. բարձրանում էին մինչ ի մի վայր Արարատ, Կերկուր, և Տորոս և Մանի լեռների վերայ, որ կոչում էին նա ևս Սեպուհ (այս ինքն Մանին)։ Արեգակը նոյնպէս պաշտուած էր արշալոյսի երևալուն պէս բոլոր լեռների վերայ, ինչպէս այսօր անում են Արևորդիներն։ Երևի որ ճանապարհորդաց և ուխտաւորաց իջևաններ շինելու սովորութիւնն նախ և առաջ սկսուել է լեռների վերայ։ Այս հիւրընկալ տեղերն կոչուած էր Վանք կամ Վանք. իւրաքանչիւր իջևանի մէջ գտնվում էր մի մասնաւոր չաստուածութիւն՝ որ կոչում էին Վանպոռ կամ Վանպ, այս ինքն հիւրընկալող։ Այս տեղերումն այս լեռների վերայ էր, որ ուխտաւորք սովորաբար իջևանում էին հանգստութիւն և զովութիւն առնելու համար։ Քրիստոնէութիւնն հաստատելուց յետոյ՝ այս